

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ**

----- 2016 թվականի N-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ
31-Ի N 815-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի «Մանկատանը, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունում (անկախ դրա կազմակերպական-իրավական ձևից) խնամվող, ինչպես նաև հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունում սովորող երեխայի խնամքի և սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» N 815-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ. «Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում, երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատություններում, երեխաների սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնում (անկախ դրա կազմակերպական-իրավական ձևից) խնամվող, ինչպես նաև հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունում սովորող երեխայի խնամքի և սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին».

2) ամբողջ տեքստում և հավելվածներում «մանկատուն» բառը փոխարինել «երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի հաստատություն» բառերով, «մասնագիտացված մակատուն» բառերը՝ «երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հատուկ (մասնագիտացված) տիպի հաստատություն» բառերով, իսկ «երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատության» բառերը՝ «երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատություն» բառերով՝ համապատասխան հոլովածներով:

3) որոշումը լրացնել 15-21-րդ կետերով հետևյալ բովանդակությամբ.

«15) երեխաների սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնում խնամվող երեխայի սննդի տեսականին և քանակը (մեկ խնամվողի հաշվարկով)՝ համաձայն N 15 հավելվածի.

16) բնակչության սոցիալական պաշտպանության 0-6 տարեկան երեխաների մասնագիտացված մանկատաների մաքրիչ և սանիտարահիգիենիկ նյութերի տարեկան նվազագույն չափորոշիչները (մեկ խնամվողի հաշվարկով)՝ համաձայն N 16 հավելվածի.

17) բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների /0-6 տարեկան երեխաների/ մաքրիչ և սանիտարահիգիենիկ նյութերի տարեկան նվազագույն չափորոշիչները (մեկ խնամվողի հաշվարկով)՝ համաձայն N 17 հավելվածի.

18) բնակչության սոցիալական պաշտպանության մասնագիտացված հաստատությունների /6-18 տարեկան երեխաների/ մաքրիչ և սանիտարահիգիենիկ նյութերի տարեկան նվազագույն չափորոշիչները (մեկ խնամվողի հաշվարկով) համաձայն N 18 հավելվածի.

19) բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և խնամքի գիշերօթիկ հաստատությունների /6-18 տարեկան երեխաների/ մաքրիչ և սանիտարահիգիենիկ նյութերի տարեկան նվազագույն չափորոշիչները (մեկ խնամվողի հաշվարկով) համաձայն N 19 հավելվածի.

20) «Երեխաների սոցիալական հոգաձության ցերեկային կենտրոնների մաքրիչ և սանիտարահիգիենիկ նյութերի տարեկան նվազագույն չափորոշիչները /մեկ խնամվողի հաշվարկով/ համաձայն N 20 հավելվածի.

21) բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների, երեխաների խնամքի կենտրոնների, երեխաների սոցիալական հոգաձության ցերեկային կենտրոնների (անկախ դրա կազմակերպական-իրավական ձևից) գործունեության համար անհրաժեշտ ընդհանուր ընդհանուր և բնակելի տարածքի, կոմունալ սանիտարահիգիենիկ և հակահրդեհային անվտանգության պահպանման նվազագույն չափորոշիչները համաձայն N 21 հավելվածի.».

4) որոշման N 10 հավելվածի՝

ա. «ձմեռային վերարկու կամ մուշտակ» և «կիսասեզոնային վերարկու կամ կիսավերարկու» տողերի «Ժամկետը (տարի)» սյունակի «2» թվերը համապատասխանաբար փոխարինել «1»-ով,

բ. «գոտի բամբակյա» տողը հանել:

2. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում սահմանել բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված հաստատություններ), երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատությունների, երեխաների սոցիալական հոգաձության ցերեկային կենտրոնների գրասենյակային ապրանքների տարեկան չափորոշիչները մեկ խնամվողի հաշվարկով:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում սահմանել բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված հաստատություններ), երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատությունների, երեխաների սոցիալական հոգաձության ցերեկային կենտրոնների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջները, խնամքի համար անհրաժեշտ սանիտարական կանոնները և նորմերը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հավելված N 15
ՀՀ կառավարության 2007 թվականի
մայիսի 31-ի N-815- Ն որոշման

ԵՐԵՒԱՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՈԳԱԾՈՒԹՅԱՆ ՑԵՐԵԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ
ԽՆԱՄՎՈՂ ԵՐԵՒԱՅԻ ՄՆԵԴԻ ՏԵՍԱԿԱՆԻՆ ԵՎ ՔԱՆԱԿԸ
(ՄԵԿ ԽՆԱՄՎՈՂԻ ՀԱՇՎԱՐԿՈՎ)

Սննդամթերքի անվանումը	Չափորոշիչը (գրամ) (սննդի տեսականին և քանակը հաշվարկված է մեկանգամյա սննդի տրամադրման համար)
	Տարիքը (դպրոցահասակ)
Հաց	150
Բանջարեղեն և այլ կանաչեղեն	50
Մրգեղեն՝ թարմ	100
Հյութեր	200
Շաքար	10
Հրուշակեղեն	30
Տավարի կամ հավի միս	30
Նրբաբլիթ՝ տավարի մսով	30
Թռչնի միս	30
Երշիկեղեն	15
Կաթ, կաթնամթերք	100
Կաթնաշոռ	25
Թթվասեր	25
Պանիր	12
Կարագ	10
Յուղ՝ բուսական	10
Ձուլ (հատ)	0.25
Աղ	2

«Հավելված N 16
ՀՀ կառավարության 2007 թվականի
մայիսի 31-ի N-815- Ն որոշման

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ 0-6 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵՒԱՆԵՐԻ
ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՄԱՆԿԱՏՆԵՐԻ ՄԱՔՐԻՉ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱՀԻԳԻԵՆԻԿ ՆՅՈՒԹԵՐԻ
ՏԱՐԵԿԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ
(ՄԵԿ ԽՆԱՄՎՈՂԻ ՀԱՇՎԱՐԿՈՎ)

Հ/Հ	Անվանումներ	Չափի միավորը	քանակը տարեկան
1	աման լվալու հեղուկ /1լ/	հատ	1.2
2	աման լվալու փոշի	հատ	0.8
3	լեղակ 30գր	հատ	9.5
4	լվացքի փոշի ավտոմատ	կգ	18
5	օճառ ձեռքի / 100գր/	հատ	8
6	սպիտակեցնող հեղուկ	լիտր	6.1
7	զուգարանի թուղթ	հատ	5
8	շամպուն /500մլ/	հատ	5
9	օճառ տնտեսական /100գր/	հատ	1.5
10	մանկական տակդիր	հատ	1095
11	լվացքի փոշի ձեռքով լվացքի համար	կգ	5
12	ձեռնոց ռետինից	զույգ	2
13	ավել սենյակային	հատ	0.5
14	բակի ավել	հատ	0.2
15	թաց անձեռոցիկ	տուփ	3
16	ախտահանիչ հաբեր	հաբ	48
17	ապակիների լվացման միջոց	հատ	0.5
18	ամանների սպիրալ	հատ	1.4
19	ամանների սպունգ	հատ	1.4
20	ախտահանիչ հեղուկ /750գ/	հատ	1
21	անձեռոցիկ թղթե	տուփ	4
22	հոտազերծիչ /դեզոդոր /	հատ	0.3
23	սպունգ լոգանքի	հատ	2
24	ատամի մածուկ	հատ	0.5
25	ատամի խոզանակ	հատ	0.5
26	եղունակտրիչ	հատ	1

**ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ /0-6
 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ/ ՄԱՔՐԻՉ և ՍԱՆԻՏԱՐԱՀԻԳԻԵՆԻԿ ՆՅՈՒԹԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ
 ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ (ՄԵԿ ԽՆԱՄՎՈՂԻ ՀԱՇՎԱՐԿՈՎ)**

Հ/Հ	Անվանումը	Չափի միավորը	քանակը տարեկան
1.	լվացքի միջոց /ավտոմատ/	կգ	2.6
2.	լվացքի փոշի	կգ	2.6
3.	մաքրող աղտահանող փոշի	հատ	3
4.	աման լվանալու հեղուկ	հատ	3
5.	ապակիների լվացման միջոց	հատ	1
6.	ամանների սպիրալ	հատ	1.4
7.	մաքրող նյութ գորգերի	հատ	0.4
8.	մաքրող հեղուկ սանհանգույցի	հատ	1.6
9.	մաքրող քսուկ սալիկների	հատ	0.5
10.	սպիտակեցնող հեղուկ	հատ	0.7
11.	մանկական օճառ	հատ	12
12.	զուգարանի թուղթ	հատ	12
13.	անձեռոցիկ թղթե	տուփ	4
14.	ձեռնոց ռետինից	զույգ	5
15.	օճառ ձեռքի / 100 գր./	հատ	6.7
16.	թաց անձեռոցիկ	տուփ	6
17.	քլորսեպտ /ախտահանիչ հաբեր/	հաբ	48
18.	միջատների դեմ փոշի	հատ	1.3
19.	միջատների դեմ աերոզոլ	հատ	0.3
20.	ատամի մածուկ	հատ	1
21.	ատամի խոզանակ	հատ	1
22.	մանկական յուղ	հատ	1
23.	մանկական տակդիր	հատ	4
24.	սանր	հատ	2

25.	եղունգկտրիչ	հատ	1
26.	փայլեցնող միջոց կահույքի	հատ	1
27.	հոտազերծիչ /դեզոդոր /	հատ	1.6
28.	ավել սենյակային	հատ	0.7
29.	բակի ավել	հատ	0.2

«Հավելված N 18
ՀՀ կառավարության 2007 թվականի
մայիսի 31-ի N-815- Ն որոշման

**ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ
 ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ /6-18 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆՆԵՐԻ/ ՄԱՔՐԻՉ ԵՎ
 ՍԱՆԻՏԱՐԱՎՈՐՈՒՄԻ ԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ
 (ՄԵԿ ԽՆԱՄՎՈՂԻ ՀԱՇՎԱՐԿՈՎ)**

N	Անվանումը	Չափի միավոր	Քանակը /տարեկան/
1.	լվացքի միջոց	կգ	5.5
2.	լվացքի միջոց automat կամ համարժեքը	կգ	1
3.	օճառ ձեռքի (100 գ)	հատ	12.5
4.	սպիտակեցնող հեղուկ	լիտր	4.5
5.	ամանների լվացման հեղուկ	լիտր	1.1
6.	լվացող, մաքրող միջոց	տուփ	2.1
7.	թուղթ զուգարանի	հատ	12.5
8.	անձեռոցիկ թղթյա	հատ	0.2
9.	մաստիկա (2500 գ) չափաճրարված	կգ	0.2
10.	ատամի մածուկ	կգ	0.5
11.	շամպուն	լիտր	4
12.	հատակի հեղուկ /5լ/	տուփ	0.3
13.	լվացքի հեղուկ /4լ/	տուփ	0.04
14.	տակդիր	հատ	365
15.	կանացի հիգենիկ պարագա միջադիր	հատ	40
16.	սափրող սարք /մեկանգամյա օգտագործման/	հատ	8
17.	սանր	հատ	4
18.	եղունգկտրիչ	հատ	1
19.	ապակիների լվացման միջոց	հատ	1
20.	ամանների սպիրալ	հատ	1.4
21.	մաքրող նյութ գորգերի	հատ	0.4
22.	մաքրող հեղուկ սանհանգույցի	հատ	1.6
23.	մաքրող քսուկ սալիկների	հատ	0.5

24	փայլեցնող միջոց կահույքի	հատ	1
25	հոտազերծիչ /դեզոդոր /	հատ	1.6
26	ավել սենյակային	հատ	0.7
27	բակի ավել	հատ	0.2
28	սպունգ խոհանոցի	հատ	0.5
29	սպունգ լոգանքի	հատ	1
30	ատամի խոզանակ	հատ	4

«Հավելված N 19
ՀՀ կառավարության 2007 թվականի
մայիսի 31-ի N-815- Ն որոշման

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԻՊԻ ԵՎ
ԽՆԱՄՔԻ ԳԻՇԵՐՕԹԻԿ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ /6-18 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵՒԱՆԵՐԻ/
ՄԱՔՐԻՉ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱՀԻԳԻԵՆԻԿ ՆՅՈՒԹԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ
ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ
(ՄԵԿ ԽՆԱՄՎՈՂԻ ՀԱՇՎԱՐԿՈՎ)

N	Անվանումնր	Չափի միավորը	Քանակը /տարեկան
1.	սանր	հատ	2
2.	եղունգկտրիչ	հատ	1
3.	հոտազերծիչ միջոց անձնական օգտագործման	հատ	2
4.	ծեռքի /ոտքի/ կրեմ	հատ	1
5.	կոշիկ փայլեցնելու միջոց	հատ	0.5
6.	սափրող սարք /մեկանգամյա /օգտագործման/	հատ	25
7.	սափրման մածուկ	հատ	3
8.	հիգիենիկ պարագա /միջադիր/ /ամիսը 1 տուփ/	հատ	90
9.	Տակդիր մանկական	հատ	30
10.	ատամի խոզանակ	հատ	4
11.	ատամի մածուկ	տուփ	4
12.	շամպուն 1լ	տուփ	1.4
13.	շամպուն՝ ոջիլի/250գ/	տուփ	1
14.	օճառ ձեռքի /100գ/	հատ	8
15.	հեղուկ օճառ	լիտր	0.4
16.	զուգարանի թուղթ	հատ	16

17.	անձեռոցիկ թղթյա	հատ	8
18.	լվացքի միջոց	կգ	1
19.	լվացքի միջոց " ավտոմատ"	կգ	1.5
20.	օճառ տնտեսական /100գ/	հատ	0.5
21.	ամանների լվացման հեղուկ	լիտր	0.7
22.	սպիտակեցնող հեղուկ	լիտր	0.5
23.	լվացող մաքրող միջոց	տուփ	0.5
24.	սպունգ խոհանոցի	հատ	0.5
25.	ռետինե ձեռնոցներ	զույգ	0.5
26.	ապակիների լվացման միջոց	հատ	0.3
27.	փայլեցնող միջոց փայտյա կահույքի համար	հատ	0.1
28.	հոտազերծիչ /դեզատոր/-25 նստատեղի համար	հատ	0.3
29.	սենյակային ավել	հատ	0.1
30.	ցախավել	հատ	0.1
31.	մաստիկա	կգ	0.1
32.	սալիկ մաքրող հեղուկ	հատ	0.1
33.	սանհանգույց մաքրող հեղուկ	հատ	0.4
34.	գորգ մաքրող հեղուկ	հատ	0.1
35.	ջրի փափկացնող միջոց	հատ	0.1
36.	լողակ 50գ	հատ	1.0
37.	կոյուղու խողովակներ մաքրող նյութ	հատ	0.1
38.	տեխնիկա մաքրելու անձեռոցիկ	տուփ	0.1

«Հավելված N 20
ՀՀ կառավարության 2007 թվականի
մայիսի 31-ի N-815- Ն որոշման

ԵՐԵՎԱՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՈԳԱԾՈՒԹՅԱՆ ՑԵՐԵԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ
ՄԱՔՐԻՉ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱՀԻԳԻԵՆԻԿ ՆՅՈՒԹԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ
ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ
(ՄԵԿ ԽՆԱՄՎՈՂԻ ՀԱՇՎԱՐԿՈՎ)

N	Անվանումնր	Չափի միավորը	Քանակը /տարեկան/
1.	հեղուկ օճառ	լիտր	1
2.	լվացքի փոշի 400 գր.	տուփ	0.2
3.	ախտահանիչ -մաքրող միջոց 500գր	հատ	0.25
4.	կահույքի խնամքի միջոց	հատ	0.1
5.	սալահատակի մաքրող նյութ 700գր	հատ	0.35
6.	ապակիների լվացման միջոց 400գր	հատ	0.2

7.	անձեռոցիկ	տուփ	3
8.	ամանների լվացման հեղուկ /5 լիտր/	կգ	0.6
9.	զուգարանի թուղթ	հատ	5
10.	սպունգ խոհանոցի	հատ	0.6
11.	հոտազերծիչ	հատ	0.5
12.	սպիտակեցնող հեղուկ	հատ	0.25
13.	ատամի մածուկ	հատ	2
14.	ատամի խոզանակ	հատ	2
15.	օճառ	հատ	0.8
16.	հատակի խոզանակ	հատ	0.03
17.	ավել սենյակի	հատ	0.3
18.	ռետինե ձեռնոց	հատ	0.5
19.	զորգ լվանալու հեղուկ	լիտր	0.2
20.	տնտեսական խոզանակ	հատ	0.03

Հավելված N 21
«Հ կառավարության 2007 թվականի
մայիսի 31-ի N-815- Ն որոշման

ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,
ԵՐԵՒԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԳԻՇԵՐՕԹԻԿ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԵՐԵՒԱՆԵՐԻ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՈԳԱԾՈՒԹՅԱՆ ՑԵՐԵԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ (ԱՆԿԱՆ ԴՐԱ
ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՁԵՎԻՑ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ, ԿՈՄՈՒՆԱԼ, ՍԱՆԻՏԱՐԱՀԻԳԻԵՆԻԿ ԵՎ
ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ

1. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունները, երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատությունները և երեխաների սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնները (անկախ դրա կազմակերպական-իրավական ձևից) պետք է ապահովված լինեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սանիտարահիգիենիկ նորմերին համապատասխան բնակելի (այդ թվում խնամքի, դաստիարակության, ֆիզիկական կրթության և ազատ ժամանցի կազմակերպման համար) տարածությամբ՝ հաշվի առնելով երեխաների սեռը, տարիքը և առողջական վիճակը:
2. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունները, երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատությունները և երեխաների սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնները (անկախ դրա կազմակերպական-իրավական ձևից) պետք է կառուցված լինեն առողջության համար անվտանգ շրջակա միջավայրում:
3. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունները, երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատությունների և երեխաների սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնների (անկախ դրա կազմակերպական-իրավական ձևից) շենքային պայմանները պետք է ապահովեն համապատասխան հնարավորություններ սալակներով տեղաշարժվող հաշմանդամություն ունեցող անձանց բնակության և կենսագործունեության համար:

4. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունները, երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատությունները և երեխաների սոցիալական հոգաձուռության ցերեկային կենտրոնները (անկախ դրա կազմակերպական-իրավական ձևից) պետք է ապահովված լինեն հակահրդեհային անվտանգության պահպանման ավտոմատ համակարգով, ապահովված լինեն հրդեհից փրկվելու համար նախատեսված հատուկ ելքերով, ազդանշանային համակարգով և հակահրդեհային համապատասխան սարքավորումներով, ունենան տարահանման պլան:

5. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների, երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատությունների և երեխաների սոցիալական հոգաձուռության ցերեկային կենտրոնների (անկախ դրա կազմակերպական-իրավական ձևից) անձնակազմը պետք է անցնի քաղաքացիական պաշտպանության ուսուցում՝ արտակարգ իրավիճակներում համապատասխան կերպով գործելու նպատակով՝ առանձնակի ուշադրություն դարձնելով հաշմանդամ երեխաների տարահանման նախապատրաստմանը:

6. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունները, երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատությունները և երեխաների սոցիալական հոգաձուռության ցերեկային կենտրոնները (անկախ դրա կազմակերպական-իրավական ձևից) պետք է ապահովված լինեն հարմարավետ, անվտանգ, հուսալի ավտոտրանսպորտային միջոցներ՝ երեխաների փոխադրումները կազմակերպելու համար: Յուրաքանչյուր հաստատության համար պետք է նախատեսել մեկ թեթև մարդատար ավտոմեքենա, խնամվողների մինչև 200 թվաքանակ ունեցող ՊՈԱԿ-ների համար նախատեսվում է մեկ միկրոավտոբուս, խնամվողների 200-ից ավել թվաքանակ ունեցող հաստատությունների համար նախատեսվում է երկու միկրոավտոբուս, իսկ մասնագիտացված հաստատությունների համար լրացուցիչ մեկով ավել:

7. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունները, երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատությունները և երեխաների սոցիալական հոգաձուռության ցերեկային կենտրոնները (անկախ դրա կազմակերպական-իրավական ձևից) պետք է ապահովված լինեն հեռախոսակապով: Յուրաքանչյուր հաստատության համար հեռախոսային կետերի քանակը հաշվարկվում է՝

- մինչև 100 խնամվող ունեցող կազմակերպությունների աշխատողների համար մեկ, խնամվողների համար երկու հեռախոսակետ,
- մինչև 200 խնամվող ունեցող կազմակերպությունների աշխատողների համար երկու, խնամվողների համար երկու հեռախոսակետ,
- մինչև 300 խնամվող ունեցող կազմակերպությունների աշխատողների համար երկու, իսկ խնամվողների համար երկու հեռախոսակետ,
- ցերեկային կենտրոնների համար լրացուցիչ մեկ հեռախոսակետ թե՛ գծի համար:

Ցերեկային կենտրոններում ընտանիքների հետազոտման նպատակով նախատեսել մեկ բջջային հեռախոսահամար ամսեկան սահմանաքանակը քննարկելով կազմավորման ժամանակ:

8. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունները, երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատությունները և երեխաների սոցիալական հոգաձուռության ցերեկային կենտրոնները (անկախ դրա կազմակերպական-իրավական ձևից) սանիտարական պայմանները պետք է բավարարեն Հայաստանի Հանրապետության սանիտարական օրենսդրության պահանջները:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի N 815-ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

	Իրավական ակտի հիմնավորումը
	Անհրաժեշտությունը
	<p>«Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի N 815-ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի (այսուհետ՝ նախագիծ) ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112-Ն որոշման 6.1 բ ենթակետի պահանջով և մանկատներում, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններում երեխաների խնամքի բարելավման անհրաժեշտությամբ:</p>
	Ընթացիկ իրավիճակը և խնդիրները
	<p>Ներկայում մանկատներում և երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններում երեխաների խնամքը իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի N 815-ն որոշմամբ սահմանված երեխայի խնամքի և սպասարկման նվազագույն չափորոշիչների: Չափորոշիչները անհրաժեշտ է լրացնել սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներով, սանիտարական կանոններով և նորմերով, ինչպես նաև սահմանել երեխաներին հատկացվող մաքրիչ նյութերի, հիգիենիկ պարագաների տեսականին և դրա չափաքանակները: Ըստ գործող չափորոշիչների երեխաներին ձմեռային կոշիկ և երկարաճիտ կոշիկ տրամադրվում է երկու տարին մեկ անգամ, որը չի բավարարում, քանի որ խնամվող երեխաների կոշիկի և վերարկուի չափսերը փոփոխվում են յուրաքանչյուր տարի: Բացի այդ խնդիր է առաջացնում հաստատություններ երեխաների ընդունելության և դուրսգրման առկա շարժը, շատ դեպքերում երեխան ստանում է իր շորը և կոշիկը և որոշակի ժամանակ անց դուրս է գրվում, իսկ նոր ընդունված երեխաների համար արդեն այն չի բավարարում:</p>
	Կարգավորման նպատակը և բնույթը
	<p>Նախագծով առաջարկվում է՝</p> <ol style="list-style-type: none"> 1. Կարգավորել երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված հաստատություններ), երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատությունների, երեխաների սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջները, սանիտարական կանոնները և նորմերը: 2. Ձմեռային վերարկուն և կիսասեզոնային վերարկուն, կոշկեղենը 2 տարին մեկ տրամադրելու փոխարեն այն տրամադրել յուրաքանչյուր տարի:
	Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք
	Նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից:

	Ակնկալվող արդյունքը
	Նախագծի ընդունումը կնպաստի Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված հաստատություններ), երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատությունների, երեխաների սոցիալական հոգածության ցերեկային կենտրոններում երեխաների խնամքի բարելավմանը:

ՏԵՂԵԿԱՆՔ

« Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի N 815-Ն որոշուման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» նախագծի ընդունման առնչությամբ պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումների կամ նվազեցումների մասին

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի N 815-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծն ընդունելու դեպքում պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերը և եկամուտները կավելանա շուրջ 40,310.0 հազար դրամով:

«Ձմեռային վերարկու կամ մուշտակ», «կիսասեզոնային վերարկու կամ կիսավերարկու», «բրոյա սվիտեր» և «տաք կոշիկ կամ երկարաճիտ կոշիկ» ձեռքբերման քանակները կավելանա 695 հատով, որից

1. «Ձմեռային վերարկու կամ մուշտակ» $695 \times 25.0 = 17,375.0$ հազար դրամ,
2. «Կիսասեզոնային վերարկու կամ կիսավերարկու» $695 \times 15 = 10,425.0$ հազար դրամ,
3. «Բրոյա սվիտեր» $695 \times 8 = 5,560.0$ հազար դրամ
4. «Տաք կոշիկ կամ երկարաճիտ կոշիկ» $695 \times 10 = 6,950.0$ հազար դրամ:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի N 815-Ն որոշուման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ ընդունվելիք այլ իրավական ակտերի կամ դրանց ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

	Այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտությունը
	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի N 815-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չկա:

	Միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանությունը
	Որոշման նախագծով կարգավորմանն առաջարկվող հարցերի մասով միջազգային պայմանագրերով պարտավորություններ չեն ստանձնվել:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Հայաստանի Հանրապետության Կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագծի նախագծմանը և քննարկմանը հասարակության մասնակցության մասին

	Հասարակությանը նախագծի վերաբերյալ իրազեկումը
	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի N 815-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագիծը տեղադրվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության www.mlsa.am ինտերնետային կայքում՝ 2016 թվականի ապրիլին: